ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԳԱԳԻԿ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 360-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 372-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱ-ՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒ-ԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Գագիկ Տեր-Վարդանյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2025 թվականի նոյեմբերի 6-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Գագիկ Տեր-Վարդանյանի (այսուհետ՝ Դիմող) դիմումը, որով Դիմողը խնդրել է.

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 75-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունները»:

2. Ներկայացնելով թիվ ԿԴ/14258/02/23 քաղաքացիական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը գտնում է, որ տվյալ գործի շրջանակներում Վերաքննիչ քաղաքացիական և Վճռաբեկ դատարանները վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը մեկնաբանել են Սահմանադրության 61, 63, 75, 78 և 79-րդ հոդվածներին հակասող մեկնաբանությամբ՝ գալով անհիմն և անօրինական եզրահանգման առ այն, որ վճիռը բողոքարկվել է այն բողոքարկելու իրավունք չունեցող անձի կողմից:

Դիմողը նշում է, որ խնդրո առարկա քաղաքացիական գործի շրջանակներում իր՝ որպես գործին մասնակից չդարձված անձի կողմից ներկայացված վերաքննիչ և վճռաբեկ բողոքները վարույթ չեն ընդունվել այն պատճառաբանությամբ, որ հիմնավորված չէ ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2025 թվականի մարտի 7-ի վճռի՝ բողոքաբերի իրավունքներին և պարտականություններին առնչվելու հանգամանքը: Հավելելով՝ Դիմողը պնդում է, որ տվյալ քաղաքացիական գործի շրջանակներում Վերաքննիչ քաղաքացիական և Վճռաբեկ դատարանները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ գործին մասնակից չդարձված անձի կողմից բողոք է ներկայացվել ոչ թե օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված՝ իր սեփականության իրավունքը պաշտպանելու նպատակով, այլ խնդրո առարկա անշարժ գույքի նկատմամբ իր և իր հանգուցյալ մոր ունեցած գույքային իրավունքները, պահանջի իրավունքը, այդ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու լեգիտիմ ակնկալիքի իրավունքը պաշտպանելու նպատակով, որի վրա տարածվում է սեփականության իրավունքին համարժեք պաշտպանության ռեժիմ:

Արդյունքում՝ Դիմողը եզրահանգում է, որ վիճարկվող դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրվել է Սահմանադրության 61, 63, 75, 78 և 79-րդ հոդվածներին հակասող մեկնաբանություն, որի հետևանքով խախտվել է իր՝ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված՝ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված* ***նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,*** *ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որտեղ սահմանվում են այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով կարող է անհատական դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված ***նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,*** *ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում* ***առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:***

Սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ «*(…) բոլոր այն դեպքերում, երբ դիմողը,* ***ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (…) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:***

Այս առումով հարկ է փաստել, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են **ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի տվյալ գործով կիրառման կամ չկիրառման, այլ նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի (դրույթների) սահմանադրականության գնահատման հարցեր:**

Քննարկվող համատեքստում հաշվի առնելով Դիմողի ներկայացրած դիրքորոշումները և հիմնավորումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերջինիս կողմից բարձրացվել է այնպիսի հարց, որը **ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը՝** հետևյալ պատճառաբանությամբ.

գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն անհատական դիմումով **Դիմողը, ձևականորեն վիճարկելով** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) **սահմանադրականությունը, ըստ էության, բարձրացնում է տվյալ դրույթների կիրառման իրավաչափության հարց:**

Այսպես՝ Դիմողն իր անհատական դիմումով ներկայացրել է դիրքորոշում առ այն, որ *«Վերաքննիչ և վճռաբեկ դատարանները պատշաճ չեն հետազոտել բողոքին*

կից ներկայացված ապացույցները, որով հաստատվում են բողոքաբերի և իր մոր՝ Մաղլենա Տեր-Վարդանյանի առնչությունը վեճի առարկա բնակարանի հետ, իրենց կողմից բնակարանը տիրապետելու, օգտագործելու, վճարումներ կատարելու վերաբերյալ ներկայացված ապացույցները, ինչի հետևանքով սխալ եզրահանգման է եկել բողոքաբերի՝ Դատարանի վճիռը բողոքարկելու իրավունք չունենալու վերաբերյալ:

Վերաքննիչ և վճռաբեկ դատարանները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ գործին մասնակից չդարձած անձի կողմից բողոք է ներկայացվել ոչ թե օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված իր սեփականության իրավունքը պաշտպանելու նպատակով, այլ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի թիվ 43 շենքի թիվ 13 բնակարանի նկատմամբ իր և իր հանգուցյալ մոր՝ Մաղլենա Տեր-Վարդանյանի ունեցած գույքային իրավունքները, պահանջի իրավունքը, այդ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու լեգիտիմ ակնկալիքի իրավունքը պաշտպանելու նպատակով, ինչի վրա տարածվում է սեփականության իրավունքին համարժեք պաշտպանության ռեժիմ»:

Դիմողը նաև նշել է. «*(...) Վերաքննիչ և վճռաբեկ դատարանները հաշվի չեն առել նաև այն հանգամանքը, որ հայցը հարուցվել է մինչև հարուցումը մահացած պատասխանողի դեմ, որի վերաբերյալ բողոքաբերի կողմից ներկայացվել է Սվետլանա Կոբոլևսկայայի մահվան վկայականի պատճենը: Այսինքն, սույն գործն առհասարակ չէր կարող հարուցվել, իսկ հարուցվելուց հետո էլ ենթակա է եղել կարճման, ինչը Վերաքննիչ և վճռաբեկ դատարանները հաշվի չեն առել»:*

Միաժամանակ, Դիմողը ներկայացրել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) Դատարանները պատշաճ չեն հետազոտել բողոքին կից ներկայացված ապացույցները, որով հաստատվում են բողոքաբերի և իր մոր՝ Մաղլենա Արամի Տեր-Վարդանյանի առնչությունը վեճի առարկա բնակարանի հետ, նրանց կողմից բնակարանը տիրապետելու, օգտագործելու, վճարումներ կատարելու վերաբերյալ ներկայացված ապացույցները, ինչի հետևանքով սխալ եզրահանգման են եկել բողոքաբերի՝ վճիռը բողոքարկվելու իրավունք չունենալու վերաբերյալ, (...)»:*

Վերոշարադրյալի հաշվառմամբ, նկատի ունենալով նաև Դիմողի կողմից դիմումում ներկայացված մյուս դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը

գտնում է, որ վերջինս **իր անհամաձայնությունն է հայտնում թիվ ԿԴ/14258/02/23 քաղաքացիական գործով ՀՀ դատարանների կողմից կայացված դատական ակտերի բովանդակության առնչությամբ:** Մասնավորապես, Դիմողը վիճարկվող՝ **ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) հակասահմանադրականության որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացնում,** իսկ որպես փաստարկ ներկայացվող դիրքորոշումներն առավելապես վերաբերում են **խնդրո առարկա քաղաքացիական գործով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի և Վճռաբեկ դատարանի գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափությանը:**

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն դիմումով Դիմողի բարձրացրած հարցի ըստ էության քննությունը ենթադրում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե վիճարկվող դրույթների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) սահմանադրականության գնահատում, այլ խնդրո առարկա քաղաքացիական գործի շրջանակներում Վերաքննիչ քաղաքացիական դատարանի և Վճռաբեկ դատարանի գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափության ստուգում, ինչը **դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:**

Ուստի՝ սույն անհատական դիմումով գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից **ենթակա է մերժման՝** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ **դիմումում առաջադրված հարցի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:**

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«Գագիկ Տեր-Վարդանյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

2 դեկտեմբերի 2025 թվականի
ՍԴԱՈ-181